ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՀԵ ՈՍԿԱՆԻ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻԳ.00.02. -Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВАГЕ ВОСКАНОВИЧ ПОГОСЯН

ПРОЦЕСС СОЗДАНИЯ ИНСТИТУТА ПАРТИЙНОГО РУКОВОДСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

Ереван-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:
Գիտական ղեկավար՝ **ք.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Միշայի Քեռյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
ք.գ.դ., պրոֆեսոր Վահե Սամվելի Դավթյան
ք.գ.թ, դոցենտ Հասմիկ Նապոլեոնի Շափաղաթյան

Առաջատար կազմակերպություն՝
Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հունվարի 25-ին, ժամը 12:00–ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 056 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2024թ. դեկտեմբերի 15-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ _____ Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.
Научный руководитель: доктор политических наук, профессор Г. М. Керян
Официальные оппоненты: доктор политических наук, профессор В.С.Давтян
кандидат политических наук, доцент А.Н.Шапагатян

Ведущая организация: Российско-Армянский университет

Защита состоится 25 января 2024г. в 12:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 "Политология и международные отношения” ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 15 декабря.

Научный секретарь специализированного совета кандидат исторических наук, доцент _____ В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է ՀՀ-ում այնպիսի հիմնախնդիրների առկայությամբ, որոնք առնչվում են քաղաքական կյանքում կուսակցական լիդերների մասնակցությանը: Մի կողմից, ՀՀ-ում առկա է կուսակցական լիդերների դերի նշանակալի բարձրացում, որոնք կենտրոնացրել և կենտրոնացնում են իշխանության տարբեր մակարդակների կարևորագույն ռեսուրսները՝ այդ միջոցով իրականացնելով միանձնյա կառավարում, մյուս կողմից, առկա են կուսակցական լիդերներ, որոնք երբևէ չունենալով իշխանության և պետական կառավարման ամբողջական լծակներ, էական ազդեցություն են ունեցել քաղաքական մրցապայքարի վրա: Քաղաքագիտական և առհասարակ հասարակագիտական գրականության մեջ առկա են «կուսակցական լիդերի» իմաստավորման վերաբերյալ տարբեր մոտեցումներ, երբեմն մեկը մյուսին հակասող քննարկումներ և տիպաբանական բնութագրումներ: Այս ամենը վկայում է այն մասին, որ «կուսակցական լիդեր» հասկացության հիմնախնդիրը ՀՀ-ի քաղաքական իրադրության պայմաններում դեռևս հայեցակարգային մակարդակով բավարար մշակված չէ: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ՀՀ-ում «կուսակցական լիդերների» վերաբերյալ առկա գործնական հետազոտությունների բացակայությամբ, անկախություն հռչակումից հետո տեղի ունեցած հասարակական-քաղաքական փոփոխություններով, խորհրդարանական կառավարման համակարգին անցնելուց հետո՝ ՀՀ վարչապետի ընտրությունների արդյունքում տեղի ունեցած իրադարձություններով:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Քաղաքական լիդերության ինստիտուտի և դրանից բխող «կուսակցական լիդերների» զարգացման հիմնական փուլերը ներկայացված են անտիկ մտածողների և ժամանակակից տեսաբանների կողմից: Լավագույն քաղաքական կառավարման խնդիրը, որը կապահովեր հասարակության զարգացումը, իր տեղն է գտել պատմության մեջ հայտնի փիլիսոփաների և հրապարակախոսների աշխատություններում (Կոնֆուցիոս, Արիստոտել, Պլատոն, Ն. Մաքիավելի, Թ. Հոբս, Է. Կանտ և ուրիշներ): Տվյալ հիմնախնդրի ուսումնասիրության նկատելի զարգացում տեղի ունեցավ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Այդ շրջանում փորձ արվեց քաղաքական լիդերության ձևավորման երևույթը բացատրել հոգեբանական տեսանկյունից (Հ. Լեբոն, Ֆ. Նիցշե, Զ. Ֆրեյդ, ՈՒ. Բուլիտ, Հ. Լասուել և ուրիշներ): Գերմանացի սոցիոլոգ Մաքս Վեբերը

քաղաքական լիդերի հոգեբանական խնդիրները պայմանավորում էր քաղաքական գործչի կողմից իշխանության խնդիրների հետ կապված շարժառիթային ակտիվության առանձնահատկություններով: Քաղաքական լիդերության հոգեբանական ուղղությունն իր հետագա զարգացումը ստացավ քաղաքական հոգեբանության շրջանակներում (Ա. Ֆիլեյ, Ռ. Հաուս, Հ. Գերտ, Ս. Միլզ, Ֆ. Ֆիդլեր, Է. Հոլանդեր, Ի. Ջենիգս, Ռ. Սթոգլեր, Մ. Հերման, Դ. Վինթեր, Ա. Ի. Յուրև): Նրա առարկան սահմանվում է հատկանիշներով, վիճակներով և հոգեկան գործընթացներով, որոնք վերափոխվում են իշխանության հետ անհատի փոխազդեցության ժամանակ:

20-րդ դարի երկրորդ կեսերին լիդերության թեման ակտիվորեն սկսեց քննարկվել քաղաքական գիտության մեջ (Ջ.Մ. Բերնս, Ժ. Բլոնդել, Դ. Փեյջ, Ա. Վիլդավսկի, Գ. Գյունտեր, Բ. Կելերման, Ռ. Թակեր): Այս հեղինակները փորձում էին լիդերության հիմնախնդիրները լուծել նյութի դասակարգման և ընդհանուր նպատակի համակարգման ճանապարհով: Լիդերային վարքագծի հիմնախնդիրների քննարկումը շարունակեց ամերիկացի քաղաքագետ Ռոբերտ Թաքերը «Քաղաքական մշակույթը և լիդերությունը Խորհրդային Ռուսաստանում: Լենինից մինչև Գարբաչով» գրքում: Այս վերլուծության առանձնահատկությունն այն է, որ լիդերության երևույթի համար ընդհանուր համատեքստ է քաղաքական մշակույթն ընդհանրապես և հետազոտվում է Ռուսաստանի հեղափոխական պրակտիկան մասնավորապես: Ի տարբերություն նշված հեղինակների՝ ֆրանսիացի քաղաքագետ Ժան Բլոնդելն իր «Քաղաքական լիդերություն: Ճանապարհ դեպի համընդհանուր վերլուծություն» աշխատությունում փորձել է ներկայացնել քաղաքական լիդերության միասնական հայեցակարգ: Ըստ նրա՝ անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր դասակարգման մեխանիզմ, որի հիմքը կդառնա լիդերի ազդեցության ցուցանիշը: Քաղաքականության վերաբերյալ ժամանակակից դատողությունները առնչվում են ոչ միայն իշխանության և ազդեցության հասկացություններին, այլև կառավարման վերաբերյալ պատկերացումներին, սակայն «լիդերություն» և «կառավարում» հասկացությունների հարաբերակցությունը դիտարկվում է կազմակերպման օրինակով, այսինքն՝ լիդերության քննարկումը կապվում է մենեջմենթի հետ: Հենց այս առումով էլ 20-րդ դարավերջում լիդերության բնույթի վերաբերյալ ընդհանուր պատկերացումը ենթարկվեց փոփոխությունների: Ներկայումս արդիական է կուսակցական լիդերի երկու տարատեսակ՝ գիտելիքի և անհատական որակների վրա հիմնված կուսակցական լիդեր: Այս երկու գործիքներն են կուսակցական լիդերին թույլատրում լինել

արդյունավետ ղեկավար և կառավարիչ, ազդեցություն ցուցաբերել և փոխել մարդկանց գիտակցությունն ու վարքագիծը: «Կուսակցական լիդեր» հասկացության հիմնախնդրի հետ կապված որոշ հարցեր քննարկվել են նաև ժամանակակից ռուս քաղաքագետների, սոցիոլոգների և փիլիսոփաների կողմից ի դեմս՝ Ն. Ա. Ձենկովիչի, Մ. Վ. Իլինի, Ն. Յու. Լապինի, Ա. Ս. Պանարինի, Վ. Պ. Պուգաչևի, Գ. Վ. Շախնազարովի, Ե. Բ. Շեստոպալի և այլոց:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության *օբյեկտն* է կուսակցական լիդերության ինստիտուտը, կուսակցական լիդերի գործառույթները և դերակատարումը քաղաքական գործընթացներում, *առարկան*՝ կուսակցական լիդերության ինստիտուտի կայացումն է ՀՀ-ում, ՀՀ քաղաքական կյանքում կուսակցական լիդերների դերակատարությունը, դրանց կայացումը, մասնակցությունը քաղաքական գործընթացներին 1991-2021թթ.-ի տարածական-ժամանակային համատեքստում: Կուսակցական լիդերների հետազոտման ընթացքում հիմք ենք ընդունել կուսակցական լիդերության դրսևորման երկու հայեցակետ: Առաջինը կուսակցական լիդերի ինստիտուտն է՝ որպես կուսակցության ներսում անհատների գործունեություն, երկրորդը՝ կուսակցական լիդերությունը՝ որպես քաղաքական վարք և հոգեբանական ազդեցություն:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել «կուսակցական լիդերների» ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում, նրա տեսական, հայեցակարգային և պրակտիկ կողմերը՝ կապված հասարակական-քաղաքական իրողությունների հետ և առաջարկել ՀՀ կուսակցական լիդերների նոր տիպաբանություն:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետազոտական հետևյալ *խնդիրները*.

Խնդիր 1. Հստակեցնել «կուսակցական լիդերություն» ինստիտուտի վերաբերյալ առկա հիմնական տեսահայեցակարգերը՝ *վերլուծելով* թեմայի վերաբերյալ ակադեմիական գրականությունը, *ձևակերպելով* ատենախոսությունում օգտագործվող «կուսակցական լիդեր» հասկացության սահմանումը, *կատարելով* «քաղաքական» ու «կուսակցական լիդեր» հասկացությունների պատմական վերափոխման ուսումնասիրություն և «քաղաքական լիդեր» ու «կուսակցական լիդեր» հասկացությունների տարանջատում, *սահմանելով* «կուսակցական լիդերի» գործառույթները:

Խնդիր 2. Քաղաքական գործընթացներում կուսակցական լիդերների ազդեցության գործակիցը որոշելու նպատակով հետազոտել կուսակցական լիդերների ձևավորման առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետությունում՝ *ուսումնասիրելով* ՀՀ որոշ կուսակցությունների լիդերների անհատական որակները, *վեր հանելով* ներկուսակցական կառավարման կարգավորումները կուսակցական լիդերի դերակատարարումը բացահայտելու նպատակով, *վերլուծելով* ՀՀ կուսակցությունների ներկուսակցական ժողովրդավարության մակարդակը՝ որոշումների կայացման տեսանկյունից, *հետազոտելով* կուսակցական լիդերի և շարքային անդամների փոխհարաբերությունները լիդերի դերակատարումը բացահայտելու նպատակով:

Խնդիր 3. Ուսումնասիրել և առաջարկել հայաստանյան կուսակցական լիդերների տիպաբանությունը՝ *դիտարկելով* կուսակցությունների ծրագրի և կանոնադրության փոխկապակցվածությունը կուսակցական լիդերի գործունեության հետ, *վեր հանելով* կուսակցության ծրագրի և կուսակցական լիդերի կողմից իրացվող իրական քաղաքականության նմանություններն ու տարբերությունները, *բացահայտելով* ինքնավար կուսակցական լիդերների և իշխանությանը հարակից կուսակցական լիդերների տարատեսակները, *առաջարկելով* ՀՀ կուսակցական լիդերների գաղափարական տիպաբանությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտման ընթացքում օգտագործվել են այնպիսի դասական մեթոդներ, ինչպիսիք են՝ տրամաբանական և պատմական, ինդուկցիա և դեդուկցիա, անալիզ և սինթեզ, համեմատական մեթոդները: Պատմական մեթոդը օգտագործվել է «կուսակցական լիդեր» երևույթի ծագման, զարգացման շարժընթացային նախադրյալների և գործոնների վերլուծության ժամանակ: Այն հնարավորություն է տվել հիմնավորել և զարգացնել այն դրույթը, որ տարբեր պատմական իրավիճակներում «կուսակցական լիդեր» երևույթը պարտադիր չէ, որ պետք է դրսևորվի տարբեր կերպ: Ճիշտ է, նրա բնույթն ու տիպը փոփոխական բնույթ կարող են կրել, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունենում բուն երևույթի վրա՝ պնդելու, թե ժամանակային համատեքստը էական ազդեցություն կարող է գործել: Նշված և այլ մեթոդների (համակարգային-պատմական, համեմատական սկզբունքների, կառուցվածքային-գործառնական, վարքաբանական, տիպաբանական) օգտագործումը հնարավորություն է տվել կատարել «կուսակցական լիդերի» հասկացութային իմաստավորում և բազմակողմանի դիտարկում: Հետազոտական, տրամաբանական և համեմատական մեթոդները թույլ են տվել բացահայտել կուսակցական լիդերների իրական տեղադիրքը կուսակցություններում և ներկայացնել այնտեղ առկա ներկուսակցական ժողովրդավարության մակարդակը որոշումներ կայացնելիս: Հետազոտության խնդրի առարկայի վերաբերյալ

համալիր պատկերացում ստանալու, փորձագետների և տեսաբանների հետազոտությունները ուսումնասիրելու նպատակով իրագործվել է թեմայի մասին գրականության տեսության վերլուծություն (literature analysis): Փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը (content analyses) և կուսակցական լիդերների ելույթների խոսույթային վերլուծությունը (discourse analyses) հնարավորություն են տվել վերլուծել կուսակցական տարբեր լիդերների գաղափարական ուղղվածությունը և արտաքին քաղաքական կողմնորոշումը: Աշխատանքում կարևոր դեր ունեն ինստիտուցիոնալային և քաղաքական-մշակութային մոտեցումները, որոնք թույլ են տվել վերլուծել կուսակցական լիդերի տիպերի ձևավորման առանձնահատկությունները:

Առաջարկվող հիպոթեզը: ՀՀ-ում կուսակցությունների անձնակենտրոնության բարձր մակարդակը պայմանավորված է հայրենի քաղաքական մշակույթով: Այսօրինակ քաղաքական մշակույթի ձևավորման պատճառն այն է, որ ՀՀ-ն ժողովրդավարացման կարճ ճանապարհ է անցել, իսկ մինչ դա կրել է ԽՍՀՄ քաղաքական մշակույթի անձնակենտրոն առանցքը: Այսպիսով, «կուսակցական լիդերի» բնույթը դրսևորվում է և՛ պատճառային, և՛ հետևանքային սկզբունքներով, այն կրում է և՛ դրական և՛ բացասական գծեր՝ հենվելով ինչպես հրատապ, այնպես էլ ներունակ ռեսուրսների վրա:

Աշխատանքի գիտական նորույթը: Սույն աշխատանքը հայ քաղաքագիտական շրջանակներում առաջին հետազոտությունն է, որը համընդգրկուն կերպով անդրադառնում է ոչ միայն կուսակցական լիդերների ձևավորման և կայացման առանձնահատկություններին ՀՀ-ում, այլև սինթեզի, համեմատության և վերլուծության հիման վրա տրվում է ՀՀ-ի կուսակցական լիդերների տիպաբանություն՝ հիմնված գաղափարական ուղղվածության և արտաքին քաղաքական կողմնորոշման վրա: «Կուսակցական լիդերների» հետազոտությունը իրականացվել է ժամանակային առումով շրջափուլերի բաժանման և ազդող գործոնների բացահայտման ու վերհանման սկզբունքի հիման վրա: Այս իմաստով, հետազոտության առաջին շրջափուլ է վերցվել 1991-1998թթ.-ը, որը նշանավորվել է ՀՀ-ի անկախության, քաղաքական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիայի և կուսակցությունների ինստիտուցիոնալացման համատեքստում: Երկրորդ շրջափուլը իր մեջ ներառում է 1998-2018թթ.-ը, որը պայմանավորված էր 1998թ.-ի իշխանափոխությամբ և քաղաքական համակարգի ավտորիտարացմամբ, ինչը էլ ավելի ամրապնդեց կուսակցություններում անձնակենտրոնությունը: Երրորդ շրջափուլը սկսվել է 2018թ.-ին տեղի ունեցած իշխանափոխությամբ, որը սկիզբ

դրեց քաղաքական նոր վարչակազմի ձևավորման, նոր քաղաքական առաջնահերթությունների սահմանման, որի արդյունքում առաջատար դեր ստանձնեցին նոր կուսակցությունները, սակայն անձնակենտրոնությունը դրա արդյունքում ոչ միայն չի նվազել, այլև ընդհակառակը՝ գնալով ամրապնդվել է և ստացել նոր դրսևորում:

Ներկայացվող հետազոտությունն ու դրանում առկա եզրակացությունները կարևոր են ինչպես տեսական և իմացաբանական գիտելիքի հարստացման, այնպես էլ քաղաքական կիրառելիության նպատակներով: Այս իմաստով. Համեմատական վերլուծության հիման վրա *իրականացվել է* քաղաքական լիդերության ընդհանուր հասկացությունից տարաջատված «կուսակցական լիդեր» հասկացության համալիր վերլուծություն: Հետազոտության արդյունքում *տրվել է* «կուսակցական լիդեր» հասկացության նոր համալիր սահմանում, ըստ որի՝ *կուսակցական լիդերը խմբի վրա օրինական ազդեցություն կրող անհատ է՝ որպես որոշակի իրավիճակում իշխանություն իրականացնող, նա կուսակցության բարձրագույն ներկայացուցիչն է, որը, իր համախոհների շահերի ամբողջացման և մշակման արդյունքում, միտված է հասնել իշխանության և բավարարել ներկուսակցական և սեփական շահերը*: *Պարզաբանվել են* «կուսակցական լիդեր» հասկացության ծագման և էվոլյուցիայի հիմնական գործոնները ՀՀ-ում: Քաղաքական տեսության և ՀՀ-ում քաղաքական կյանքի կիրառական դրսևորումների բազմագործոն համեմատական-քաղաքագիտական վերլուծության հիմքի վրա *բացահայտվել են* «կուսակցական լիդերների» *ձևավորման և իրացման* առանձնահատկությունները: Կուսակցական լիդերի և շարքային անդամների փոխհարաբերությունների հետազոտության հիման վրա *իրականացվել է* ՀՀ կուսակցական լիդերների դերի և ազդեցության չափի գնահատում ներկուսակցական փոխհարաբերություններում: Կուսակցությունների անհատակենտրոնության և լիդերի կառավարման լծակների աստիճանը որոշելու նպատակով *հետազոտվել է* հայաստանյան կուսակցությունների ներկուսակցական ժողովրդավարությունը՝ որոշումների կայացման գործընթացում: ՀՀ-ի օրինակով *վեր են հանվել* բոլոր այն ռիսկերը, որոնք պայմանավորված են կուսակցությունների անձնավորման հետ: Կուսակցական լիդերի անձնական իմիջի տարածման արդյունքում և դրանից հետո նրա՝ քաղաքականությունից որևէ պատճառով հեռացումը կուսակցությունից կարող է կանգեցնել այնպիսի հետևանքների, ինչպիսիք են քաղաքականությունից կուսակցության հեռացումը և մրցունակության գերնվազումը:

Աշխատանքի գիտատեսական և կիրառական նշանակությունը: Ակնկալում ենք, որ մեր կողմից կատարված հետազոտությունը կարող է տեսաբանների և հետազոտողների ուշադրությանը արժանանալ՝ որպես ՀՀ-ի քաղաքական կյանքի բարդ հիմնախնդիրներից մեկի հետազոտություն, ինչպիսին հանդիսանում է «կուսակցական լիդեր» հասկացությունը: Հետազոտությունը կարող է օժանդակել ժամանակակից հայաստանյան իրողություններին առավել համապատասխան կուսակցական լիդերների տիպերի և մոդելների բացահայտմանը: Աշխատանքը կարող է կիրառական նշանակություն ունենալ ՀՀ-ում ներկուսակցական ժողովրդավարության ամրապնդման և արդյունավետ կուսակցաշինության համատեքստում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:
Հետազոտության ընթացիկ արդյունքներն ու դրույթները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնում և ամբիոնի կողմից երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են թվով տասը գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության մեջ օգտագործվել է 254 աղբյուր: Թեկնածուական ատենախոսության տեքստային ծավալը 169 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածությունը հիմնավորում է թեմայի արդիականությունը, սահմանում հետազոտության նպատակն ու խնդիրները, ցույց տալիս թեմայի գիտական մշակվածությունը, առանձնացնում ու նկարագրում հետազոտության օբյեկտը և առարկան, տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը վերնագրված է **«Կուսակցական լիդերության հետազոտման տեսահայեցակարգային հիմքերը»**, որը ներկայացնում է քաղաքական գիտության մեջ կուսակցական լիդերության ինստիտուտի վերաբերյալ առկա տեսական և հայեցակարգային մոտեցումները: Այս գլխում քննարկվում են նաև կուսակցական լիդերության քաղաքական ղեկավարման դրսևորման առանձնահատկությունները և տրվում են գիտագործնական մեկնաբանություններ:

Գլխի առաջին՝ **«Կուսակցական լիդերության սահմանման հայեցակարգային մոտեցումները»** ենթագլխում ներկայացվում է «կուսակցական լիդերություն» հասկացության ծագումը, զարգացումը, ներհայեցակարգային հիմնական բանավեճերն և դրանց արդյունքում առաջացած տեսական ճյուղավորումները: Հաշվի առնելով նաև քաղաքագիտության մեջ «կուսակցական լիդերություն» ինստիտուտը քաղաքական լիդերության համատեքստում դիտարկելու առանձնահատկությունը՝ հստակորեն ուրվագծվել են կուսակցական լիդերության սահմանները, որոնց միջոցով այն որպես ենթատիպ առանձնանում է քաղաքական լիդերությունից: Ենթագլխում հիմնավորվում է հեղինակի այն տեսակետը, համաձայն որի՝ քաղաքական լիդերությունը հանդիսանում է կուսակցական լիդերության բարձրագույն նպատակը, քանի որ առանց քաղաքական լիդերության կուսակցական լիդերությունը մեծամասամբ սահմանափակվում է ներկուսակցական և արտակուսակցական որոշակի լծակներով ու գերակայության տիրապետմամբ: Հաշվի առնելով քաղաքագիտության մեջ կուսակցական լիդերության վերաբերյալ առկա մոտեցումներն ու միմյանցից խիստ տարբերվող հայեցակարգային սահմանումները՝ ներկայացվել է «կուսակցական լիդերություն» հասկացության վերաբերյալ քաղաքագիտական նոր սահմանում:

Երկրորդ՝ **«Կուսակցական լիդերության ինստիտուտը և նրա գործառույթները»** ենթագլխում ներկայացվել են կուսակցական լիդերության հայեցակարգի առանցքային հիմնադրույթները, նրա՝ որպես քաղաքական գիտության տեսա-մեթոդաբանական ուսումնասիրության հիմնահարցի, ձևավորման և զարգացման առանձնահատկությունները: Ենթագլխում քննարկվում են նաև կուսակցական լիդերների վարքագծային դրդապատճառները, որոնք ազդեցություն են գործում քաղաքական մրցապայքարի վրա: Ենթագլխում վեր են հանվել կուսակցական լիդերության կողմից իրականացվող բոլոր այն գործառույթները, որոնք պայմանավորում են կուսակցական լիդերների գործունեությունը: Քննարկվել են նաև կուսակցական լիդերների անհատական հատկանիշները և իրականացնել կուսակցական լիդերության քաղաքական գործունեության առանձնահատկությունների վերլուծություն:

Երկրորդ՝ «**Կուսակցական լիդերության ինստիտուտը քաղաքական համակարգի կերպափոխման և ժողովրդավարացման գործընթացում**» գլխում ներկայացված է հետազոտական խնդրի ընդհանուր շրջանակը, քաղաքական համակարգի կերպափոխման առանձնահատկությունների և ժողովրդավարացման գործընթացների համատեքստում ներկայացվել

են ՀՀ-ում կուսակցական լիդերության ինստիտուտի ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում «**Բազմակուսակցական համակարգի հաստատման գործընթացը և կուսակցությունների ինստիտուցիոնալացման առանձնահատկությունները**» վերնագրով, քննարկվել են ՀՀ-ում բազմակուսակցական համակարգի հաստատման գործընթացի առանձնահատկությունները և քաղաքական կուսակցությունների ինստիտուցիոնալացման ընթացքը: Ազատականացման և բուն ժողովրդավրդավարացման գործընթացի հիման վրա ներկայացվել են ՀՀ-ում կուսակցական լիդերության համար ակտիվ քաղաքական պայքար մղելու օրենսդրական և քաղաքական մեխանիզմների արդյունավետությունը: Քննարկվել է ՀՀ-ում քաղաքական համակարգի փոփոխությունը անկախության հռչակումից հետո, քանի որ այդ շրջանում ՀՀ-ի քաղաքական համակարգը առանձնապես չէր տարբերվում արևմտյան զարգացող քաղաքական համակարգերից՝ մշակված ժողովրդավարական և օրենսդրական մեխանզիմներով, սակայն որակական իմաստով ՀՀ քաղաքական կուսակցությունները ներքաղաքական կյանքում դեռևս չէին կատարում այնպիսի կարևոր դեր, ինչպես արևմտյան ժողովրդավարություններում: Ներկայացվել են այն բոլոր պատճառները, թե ինչու հասարակական լայն զանգվածները իրենց շահերի պաշտպանությունը այդ կառույցների մեջ չէին տեսնում, որն էլ հանգեցում էր հասարակության և կուսակցական կառույցների միջև ամուր կապերի բացակայությանը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում «**Կուսակցական լիդերության ինստիտուտի ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում**» վերնագրով, ներկայացվել է կուսակցական լիդերության ինստիտուտի ձևավորումը ՀՀ-ում, նրա զարգացման դինամիկան և առանձնահատկությունները: Ներկայացվել են քաղաքական կուսակցություններում լիդերների դերակատարման հիմնահարցերը: Անհատական օրինակով քննարկվել են, թե ՀՀ-ում ինչու են գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունները ստեղծվել և զարգացել կուսակցական լիդերների շուրջ: Հիմնավորվել է այն գաղափարը, որ քաղաքական կուսակցություններն իրենց ստեղծման հիմքում դնում են որոշակի գաղափարախոսություն իրենց ծրագրի մեջ, սակայն քաղաքական իրադրությունը ապացուցել է, որ դրանց դերակատարումը որոշիչ չի եղել, քաղաքական կուսակցությունները մեծամասամբ հիմնվում են կուսակցական լիդերի կողմից ներկայացված առաջնահերթությունների վրա: Ներկայացվել են այն բոլոր պատճառներն ու ազդող գործոնները, որոնց ներգործությամբ ՀՀ-ում կուսակցությունները դժվար է ներկայացնել որպես դասական

իմաստով կայացած, սոցիալական հենք ունեցող ներկայացուցչական ինստիտուտներ, ինչը պայմանավորված է հասարակական համակարգի անկայուն նկարագրով, սոցիալական խավերի ոչ հստակ գծագրմամբ, քաղաքական մշակույթով և ազգային հոգեխառնվածքով:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «Կ**ուսակցական լիդերությունը քաղաքական վարչակարգի փոփոխությունների համատեքստում**»: Այս գլխում համալիր կերպով որակական և քանակական մեթոդների կիրառմամբ ներկայացվել են կուսակցական լիդերության զարգացման առանձնահատկությունները քաղաքական վարչակարգի փոփոխությունների համատեքստում:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ վերնագրված «**Կուսակցական լիդերության ինստիտուտը սահմանադրական երկու բարեփոխումների և ընտրական գործընթացների համատեքստում**», քննարկվել են ՀՀ-ի կուսակցական լիդերների անհատական կերպարները, նրանց ընկալումները և դերը կուսակցությունների քաղաքականության վրա: Ներկայացվել են կուսակցական լիդերության ձևի և բովանդակության փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել սահմանադրական երկու բարեփոխումների և ընտրական գործընթացների համատեքստում: Հիմնավորվել է, որ ՀՀ քաղաքական կուսակցությունները շարունակել են մեկ անհատի շուրջ ձևավորված քաղաքական կազմակերպության գործունեության սկզբունքը, որտեղ տվյալ անհատը համարվում էր կուսակցության հանրային դեմքն ու շարժիչ ուժը: Ներկայացվել են այն չափորոշիչները, որոնց միջոցով հնարավոր է իրականացնել հայաստանյան կուսակցական լիդերների տիպաբանություն:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ վերնագրված «**Կուսակցական լիդերության դրսևորման նոր միտումները 2018 թվականի իշխանափոխության և քաղաքական վարչակարգի հաստատման պայմաններում**», ներկայացվել են 2018թ.-ին նոր վարչակարգի հաստատման ազդեցությունը կուսակցական լիդերության համատեքստում: 2018թ.-ի իրադարձությունները իրենց տրամաբանական ազդեցությունն ունեցան քաղաքական կյանքի բաղկացուցիչ տարրերի և ողջ կառավարման համակարգի վրա, որի արդյունքում տեղի ունեցավ կուսակցական-քաղաքական տարածության վերակազմավորում և քաղաքական կյանքում էական դեր սկսեցին խաղալ նոր ձևավորված և նշանակություն ստացած կուսակցական լիդերները: Չնայած 2018թ.-ի գարնանային իրադարձությունները առաջացրել էին հնարավորություն կուսակցությունների բարեփոխման և ներքին ժողովրդավարական մեխանիզմների ամրապնդման համար, միևնույնն է

կուսակցությունները քաղաքական դաշտում ձևակերպել են միայն կուսակցական լիդերի վրա հիմնված քաղաքական պահանջներ:

Եզրակացություններ բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել ստորև բերվածները՝ ներակայացված ըստ համապատասխան հետազոտական խնդիրների՝

Հստակեցնելով «կուսակցական լիդերության» ինստիտուտի վերաբերյալ առկա հիմնական տեսահայեցակարգերը՝ եզրակացրել ենք.

- ✓ «Կուսակցական լիդերների» ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների ակադեմիական անհամաձայնության հիմնական առարկան կուսակցության ներսում լիդերի դերի սահմանումն է, որը պայմանավորված է տարբեր հետազոտողների կողմից ներկուսակցական գործընթացներում կուսակցական լիդերին վերապահված գործառույթների անհամաձայնությամբ: Կուսակցական լիդերի դերակատարման վերաբերյալ առաջին մոտեցման համաձայն՝ կուսակցական լիդերը անհատ է, որը պետք է առաջնորդի քաղաքական կուսակցությունը և լինի ամենահեղինակավոր գործիչը կուսակցական թիմում: Ըստ երկրորդ մոտեցման՝ կուսակցական լիդերը պետք է ներկայանա որպես կուսակցության կողմից լիազորված անհատ:
- ✓ Հիմնվելով «կուսակցական լիդեր» հասկացության էության վրա՝ «կուսակցական լիդեր» եզրույթի համար ձևակերպել ենք քաղաքագիտական նոր սահմանում. «*Կուսակցական լիդերը անհատ է, որը, ներկայացնելով քաղաքական կուսակցություն, իր համախոհների կամավոր համաձայնությամբ ստանձնել է կուսակիցների և ընտրազանգվածի շահերի ամբողջացման, համախմբման և դրանց իրագործման առաքելությունը*: *Այլ կերպ ասած, կուսակցական լիդերը խմբի վրա օրինական ազդեցություն կրող անհատ է, կուսակցության բարձրագույն ներկայացուցիչ, որը միտված է հասնել իշխանության և բավարարել ներկուսակցական և սեփական շահերը*»:
- ✓ Կուսակցական լիդերը ընկալվում է որպես անհատ, որը պատասխանատու է հասարակության հետ կուսակցության հարաբերությունները կառավարելու և քաղաքական մրցակիցների դեմ մրցակցությունը ղեկավարելու համար, նա առաջատար դեր է ստանձնում կուսակցական պլատֆորմների մշակման և այն ընտրողներին փոխանցելու գործում:

- ✓ «Քաղաքական լիդերությունը» հանդիսանում է «կուսակցական լիդերի» բարձրագույն նպատակը, որը դրդում է կուսակցական լիդերներին հանդես գալու նախաձեռնողականության և իշխանության դիրքերից:
- ✓ Մրցունակ կուսակցական լիդերները նրանք են, որոնք օժտված են կառավարչական, կազմակերպչական և առկա մարտահրավերներին արդյունավետ արձագանքելու գործառույթներով, քանի որ դրանց արդյունքում է, որ կուսակցական լիդերը կարողանում է համախմբել համակիրներին ու ընտրազանգվածին և հասնել համատեղ շահերի բավարարմանը:
- ✓ «Կուսակցական լիդերների» զարգացման և կերպափոխման ընթացքը բացահայտելու համար գործում են «կուսակցական լիդերների» վրա ազդող արտաքին և ներքին գործոններ, որոնք էական ազդեցություն են թողնում նրանց քաղաքական գործունեության վրա: Առաջնային է հանդիսանում արտաքին միջավայրի գործոնը, քանի որ կուսակցական լիդերը գործում է որոշակի քաղաքական տարածության և ժամանակի մեջ:

Հետազոտելով «կուսակցական լիդերների» ձևավորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում՝ քաղաքական գործընթացներում կուսակցական լիդերների ազդեցության գործակիցը որոշելու համատեքստում՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- ✓ ՀՀ կուսակցական լիդերների մեծամասնությունն օժտված է անհատական մի շարք հմտություններով և առանձնահատկություններով, կառավարմանն ուղղված միջոցների առկայությամբ և անձնական վարկի բարձր մակարդակով, ինչի շնորհիվ կուսակցական լիդերները համարվում են գլխավոր ներկայացուցիչն ու կառավարիչը կուսակցությունում:
- ✓ ՀՀ-ում կուսակցությունների անձնակենտրոնությունը պայմանավորված է քաղաքական մշակույթով: Դրա պատճառն այն է, որ ՀՀ-ն ժողովրդավարացման կարճ ճանապարհ է անցել, իսկ մինչ այդ կրել և կրում է տոտալիտար և ավտորիտար քաղաքական համակարգի և քաղաքական մշակույթի ազդեցության հետևանքները:
- ✓ Չնայած ՀՀ կուսակցությունները դե յուրե ունեն կուսակցության խորհուրդ, գործադիր և վարչարարական մարմիններ, միևնույնն է որոշումներ կայացնելիս գերակա է

կուսակցական լիդերի տեսակետը: Մի կողմից փորձ է կատարվում ներկայացնել, թե կուսակցություններն ազատ են ներքին ժողովրդավարության առկայության շնորհիվ և որոշումների կայացման առումով, սակայն կուսակցությունների արտաքին և ներքին կարևորագույն հիմնախնդիրների լուծման մեջ գերակա է կուսակցության լիդերը:

- ✓ ՀՀ քաղաքական մրցապայքարում կուսակցությունների մեծամասնությունը զուրկ է ներկուսակցական ժողովրդավարությունից, հատկապես որոշումների կայացման համատեքստում, ինչը պայմանավորված է նրանց անձնակենտրոնությամբ: Ներկուսակցական ժողովրդավարության բավարար չափի բացակայությունը հանգեցնում է կուսակցություններում լիդերների դերի բարձրացմանը, որը կուսակցության մրցունակության տեսանկյունից հանգեցնում է խնդիրների և ռիսկերի:
- ✓ ՀՀ-ում կուսակցական լիդերի ինստիտուտի կայացումը ավարտուն փուլի չի հասել: Սա պայմանավորված է նրանով, որ կուսակցությունները հիմնվել են անհատի խարիզմայի վրա՝ դառնալով նրա շուրջ ձևավորված կուսակցություններ: Արդյունքում այդ կուսակցությունները քաղաքական դաշտում ձևակերպել են միայն կուսակցական լիդերի վրա հիմնված քաղաքական պահանջներ, իսկ անձնավորված քաղաքական պայքարի պայմաններում հեշտ է չեզոքացնել կուսակցական լիդերներին:
- ✓ ՀՀ կուսակցություններում լիդերները ներկայացվում են կուսակցության ներսում և դրանից դուրս բոլոր խնդիրները լուծելու ունակ անփոխարինելի անհատ: Այս իմաստով, կուսակցության ներսում լիդերի դերի բացարձակեցումը կարող է հանգեցնել այնպիսի ռիսկերի, ինչպիսիք են կուսակցության մրցունակության անկումը, քաղաքական մրցապայքարի լուսանցքում հայտնվելու հավանականությունը և այլն:
- ✓ ՀՀ-ի կուսակցությունների մեծամասնության մոտ ընդգծվում է կուսակցական լիդերների իմիջի նույնականացման քաղաքականություն, որով փորձ է կատարվում կուսակցական լիդերի իմիջը օգտագործել որպես քաղաքական կուսակցության իմիջի ձևավորման միջոց:
- ✓ ՀՀ-ում կուսակցական լիդերի ինստիտուտի ուսումնասիրության առաջին շրջափուլը (1991-1998թթ.) կրել է ՀՀ անկախության, քաղաքական համակարգի

հետխորհրդային տրանսֆորմացիայի և կուսակցությունների ինստիտուցիոնալացման ազդեցությունները, որի ընթացքում կուսակցական լիդերները հանդես են եկել կուսակցաշինության և կուսակցություններում իրենց ազդեցությունն ամրապնդելու դիրքերից: Կուսակցական լիդերի ինստիտուտի ուսումնասիրության երկրորդ շրջափուլը (1998-2018թթ.) առանձնացել է 1998թ.-ի իշխանափոխությամբ և քաղաքական համակարգի ավտորիտարացմամբ, ինչը ավելի է ամրապնդել կուսակցություններում անձնակենտրոնությունը: Ինչ վերաբերում է կուսակցական լիդերի ինստիտուտի ուսումնասիրության երրորդ շրջափուլին (2018-2021թթ.), ապա այն նշանավորվել է 2018թ.-ին տեղի ունեցած իշխանափոխությամբ, որը սկիզբ դրեց քաղաքական նոր վարչակազմի ձևավորման, նոր քաղաքական առաջնահերթությունների սահմանման, որի արդյունքում առաջատար դեր ստանձնեցին նոր կուսակցությունները, սակայն անձնակենտրոնությունը դրա արդյունքում ոչ միայն չի նվազել, այլև ընդհակառակը՝ գնալով ամրապնդվել է և ստացել նոր դրսևորում:

Ուսումնասիրելով հայաստանյան կուսակցական լիդերների տիպաբանությունը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- ✓ Հիմք ընդունելով արտաքին քաղաքական կողմնորոշման և գերակայության վերաբերյալ չափանիշները՝ ՀՀ կուսակցական լիդերներին կարելի է դասակարգել հետևյալ չորս տիպերի՝
    1. Հավաքական Արևմուտքի տնտեսական և ռազմաքաղաքական կառույցների հետ առավել սերտ համագործակցության կողմնակից լիդերներ,
    2. ՌԴ-ի և Եվրասիական ինտեգրացիոն կառույցների հետ առավել սերտ և ամուր գործընկերային հարաբերությունների կողմնակից լիդերներ,
    3. Տարածաշրջանային և համաշխարհային ուժային կենտրոնների հետ բալանսավորված քաղաքականության կողմնակից լիդերներ,
    4. Ազգայնականության սկզբունքներով արտաքին քաղաքականության կողմնակից լիդերներ:

- ✓ Հիմք ընդունելով գաղափարական ուղղվածության չափանիշը առանձնացրել ենք ՀՀ կուսակցական լիդերների հետևյալ հինգ տիպերը՝
    1. ազգային-պահպանողական գաղափարական ուղղվածության կուսակցական լիդերներ,
    2. չափավոր ազատական ուղղվածության կուսակցական լիդերներ,
    3. մարքսիստական և դեմոկրատական սոցիալիզմի գաղափարական ուղղվածության կուսակցական լիդերներ,
    4. ազատական գաղափարական ուղղվածության կուսակցական լիդերներ,
    5. ազգայնական գաղափարական ուղղվածության կուսակցական լիդերներ:
- ✓ Հիմք ընդունելով քաղաքական գործունեության ժամանակային չափանիշը՝ հանգել ենք ՀՀ կուսակցական լիդերների հետևյալ երեք տիպերին՝
    1. Ղարաբաղյան շարժման ակունքներում կանգնած, ՀՀ անկախության համար ակտիվ պայքարի ջատագով և քաղաքական կուսակցություն ստեղծած կամ ստեղծմանն օժանդակած կուսակցական լիդերներ,
    2. 1990-ականներից քաղաքական գործունեությունը սկսած, և ժամանակային որոշակի դադարներով սեփական քաղաքական թիմը առաջնորդած կուսակցական լիդերներ, որոնք նաև եղել են պետության ղեկին,
    3. ԽՍՀՄ գոյության ընթացքում պետական կառավարման տարբեր օղակներում քաղաքական բարձր պաշտոն զբաղեցրած և ՀՀ Երրորդ Հանրապետության քաղաքական կյանքում իրենց գործունեությունը շարունակած կուսակցական լիդերներ:
- ✓ Հիմք ընդունելով կուսակցական պատկանելիության, տեղային գործունեության և որոշումների ընդունման սկզբունքի չափանիշները՝ հանգել ենք ՀՀ կուսակցական լիդերների հետևյալ երեք տիպերին ՝
    1. Այլ կուսակցությունում քաղաքական գործունեություն սկսած և նոր կուսակցություն հիմնած կուսակցական լիդերներ,
    2. Հայրենադարձված կուսակցական լիդերներ,

3. Առանց ընդգծված կուսակցական լիդերի առկայության և որոշումների ընդունման կոլեգիալ սկզբունքին հավատարիմ կուսակցության լիդերներ:

- ✓ Հիմք ընդունելով իշխանության տիրապետման մեխանիզմների, քաղաքական հայացքների և ստանձնած լիազորությունների փոփոխության չափանիշները՝ հանգել ենք ՀՀ կուսակցական լիդերների հետևյալ երեք տիպերին՝
    1. Ընդդիմադիր կուսակցական լիդեր, որը իշխանության է եկել համաժողովրդական պայքարի և խաղաղ անհնազանդությունների արդյունքում և դարձել պետության ղեկավար,
    2. Պետական պաշտոն զբաղեցրած և բարձր լեգիտիմության ունեցած լիդեր, որը հետագայում ձեռնամուխ է եղել ընդդիմադիր դիրքավորում ունեցող նոր կուսակցության հիմնադրման,
    3. Կուսակցության ներսում նախաձեռնողականություն ցուցաբերած և քաղաքական մրցապայքարում էական դերակատարում ստանձնած կուսակցական լիդեր:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. Պողոսյան Վ., Քաղաքական լիդերը որպես քաղաքական կուսակցության հաջողության գրավական, «21-րդ ԴԱՐ» Նորավանք գիտակրթական հիմնադրամի հանդես: 2(78): Երևան 2018թ., էջ 116-123:
2. Պողոսյան Վ., ԱԺ պատգամավորի կարծրատիպերը ՀՀ-ում և ներկայիս իրավիճակը, «21-րդ ԴԱՐ» Նորավանք գիտակրթական հիմնադրամի հանդես: 4(80): Երևան 2018թ., էջ 121-129:
3. Պողոսյան Վ., Վարդանյան Լ., Քաղաքական լիդերությունը որպես քաղաքական գիտության հետազոտական խնդիր, «Վէմ համահայկական հանդես»: Հրատարակիչ Վէմ հանդես ՍՊԸ: Ժ (ԺԶ) տարի, 2018, թիվ 3 (63), էջ 226-243:
4. Պողոսյան Վ., Ազգային գաղափարախոսության ռազմավարական նշանակությունը ՀՀ հարատևության համատեքստում, «Գիտական Արցախ» պարբերական, ԱԵԳՄՄ, Երևան, 2 (3), 2019թ., էջ 451-459:
5. Պողոսյան Վ., Վարդանյան Լ., Դիտարկումներ «քաղաքական մանիպուլյացիա» հասկացության բովանդակության

էքսպլիկացիայի վերաբերյալ, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատոր XI, N2, 2020 թ., էջ 36-43:
6. Պողոսյան Վ., Քեռյան Գ., Քաղաքական լիդեր և լիդերություն հասկացությունների մեկնաբանության հիմնահարցը քաղաքական մտքի պատմության մեջ, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես թիվ 1 (18), Երևան, 2022թ., էջ 40-51:
7. Պողոսյան Վ., Կուսակցական լիդերության ինստիտուտի ձևավորումը ՀՀ-ում 1991-1998թթ.-ին, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատոր XIII, N6, 2022թ., էջ 21-30:
8. Պողոսյան Վ., Քեռյան Գ., Բազմակուսակցական համակարգի հաստատման գործընթացը և կուսակցությունների ինստիտուցիոնալացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես թիվ 6 (23), Երևան, 2022թ, էջ 97-112:
9. Պողոսյան Վ., Կուսակցական լիդերի անհատական հատկանիշները և գործառույթները, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան, Լիմուշ հրատարակչություն, 2 (28), 2022թ., էջ 255-266:
10. Պողոսյան Վ., Կուսակցական լիդերության զարգացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան, Լիմուշ հրատարակչություն, 1 (29), 2023թ., էջ 205-217:

ВАГЕ ВОСКАНОВИЧ ПОГОСЯН

ПРОЦЕСС СОЗДАНИЯ ИНСТИТУТА ПАРТИЙНОГО РУКОВОДСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”. Защита состоится 25 января 2024г., в 12:00 часов, на заседании специализированного совета 056 "Политология” ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

Резюме

Актуальность темы диссертации обусловлена существованием в РА таких проблем, которые связаны с участием партийных лидеров в политической жизни. С одной стороны, в РА значительно возрастает роль партийных лидеров, которые сконцентрировали и концентрируют важнейшие ресурсы разных уровней власти, осуществляя тем самым единоличное управление, с другой стороны, появляются партийные лидеры, которые никогда не обладали полным контролем над рычагами власти и государственного управления, тем не менее оказывают существенное влияние на политическую борьбу. Актуальность темы обусловлена также отсутствием практических исследований о «партийных лидерах» в РА, общественно-политических изменениях, произошедших после провозглашения независимости, событиях, произошедших в результате выборов премьер-министра РА после введения парламентской системы правления.

Введение работы обосновывает актуальность темы, определяет цель и задачи исследования, показывает научную разработанность темы, идентифицирует и описывает объект и предмет исследования, теоретико-методологическую основу, научную новизну, научное и прикладное значение.

Первая глава диссертации называется «Теоретические основы исследования партийного лидерства», в которой представлены существующие теоретические и концептуальные подходы к институту партийного лидерства в политической науке. В данной главе также рассматриваются особенности политического руководства партийного лидера и даются научно-практические комментарии.

Во второй главе «Институт партийного руководства в процессе трансформации и демократизации политической системы» представлен общий объем исследовательской проблемы, в контексте особенностей трансформации политической системы и процессов демократизации. Представлены факторы, влияющие на

формирование и развитие института партийного руководства в РА.

Третья глава озаглавлена «Партийное руководство в контексте смены политического режима». В этой главе с использованием качественных и количественных методов всесторонне представлены особенности развития партийного руководства в условиях изменения политического режима.

Vahe Poghosyan

THE ESTABLISHMENT PROCESS OF THE INSTITUTE OF PARTY LEADERSHIP IN THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation under 23.00.02 - “Political Institutions and Processes,” aspiring to earn Ph.D. in Political Science The public defense will take place on January 25 at 12:00 at the Yerevan State University, at 056 "Political Science and International Relations” HAC Specialized Chamber session (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia)

Abstract

The relevance of the dissertation topic is due to the existence of such problems in RA, which are related to the participation of party leaders in political life. On one hand, there is a significant increase in the role of party leaders in RA, who have concentrated and concentrate the most crucial resources of different levels of government, thus implementing sole governance, on the other hand, there are party leaders who have never had complete levers of power and state management, have played an essential role in shaping the political contest. The relevance of the topic is also due to the lack of practical research on "party leaders" in RA, the socio-political changes that took place after the declaration of independence, the events that took place as a result of the elections of the RA Prime Minister after the transition to the parliamentary government system.

The introduction of the work justifies the relevance of the topic, defines the goal and problems of the research, shows the scientific elaboration of the topic, identifies and describes the object and subject of the research, the theoretical and methodological basis, scientific novelty, and both scientific and applied significance.

The first chapter of the dissertation is titled "Theoretical Foundations of Party Leadership Research", which presents the existing theoretical and conceptual approaches to the institution of party leadership in political science. This chapter also discusses the features of the political manifestation of party leadership.

In the second chapter titled "Institute of Party Leadership in the Process of Transformation and Democratization of the Political System" the general scope of the research problem is presented, in the context of the features of the transformation of the political system and in the context of the processes of democratization, the factors affecting the formation and development of the party leadership institution in RA are presented.

The third chapter is titled "Party Leadership in the Context of Political Regime Changes". In this chapter, using qualitative and quantitative methods, the features of the development of party leadership in the context of changes in the political regime were comprehensively presented.